

Գուրեպկան ընդդեմ Ուկրաինայի գործով
վճռի
մեկնաբանությունը

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2005թվականի
սեպտեմբերի 6-ի վճռի
(Գանգատ 61406/00)

Հեղ. Արա Ղազարյան

2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<http://www.legalguide.am>>

Սույն վերլուծությունում տեղ գտած եզրահանգումներն ու կարծիքները արվել են «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության համար, Արա Ղազարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար: Սույն վերլուծությունը չի կարելի դիտարկել որպես տվյալ գործի հետ կապված իրավական խորհրդատվություն: Այս վերլուծությունը և նրանում արտահայտված կարծիքները հետապնդում են բացառապես կրթական և տեղեկատվական նպատակներ:

Սույն վերլուծությունում արտահայտված կարծիքները հանդիսանում են հեղինակինը և պարտադիր չէ որ համընկնեն «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության տեսակետի հետ:

Սույն վերլուծությունը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության աջակցությամբ: Վերլուծության անգլերեն տարբերակը խմբագրվել է Լոնդոնում գործող Քրդական Մարդու Իրավունքների Ծրագրի (այսուհետ՝ ՔՄԻԾ) իրավաբան Լյուսի Քլարիջի կողմից: ՔՄԻԾ-ն անկախ ոչ քաղաքական, մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող բարեգործական կազմակերպություն է, որի նպատակը Թուրքիայի, Իրաքի, Իրանի, Սիրիայի և այլ երկրների քրդաբնակ շրջաններում մարդու իրավունքների պաշտպանությունն է:

Ուսումնասիրությունն իրականացվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն:
Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....	5
2. Եվրոպական դատարանի վճիռները «քրեական մեղադրանք» հասկացության վերաբերյալ.....	5
3. Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Բանաձևերը Հայաստանի Հանրապետությունում վարչական կալանքի վերաբերյալ.....	6
4. «Քրեական մեղադրանք» հասկացության ինքնուրույն մեկնաբանելու պատճառները	7
5. «Մեղադրանք » հասկացության մեկնաբանությունը	10
6. «Քրեական» հասկացության մեկնաբանությունը	10
6.1. <i>իրավախախտման դասակարգումն ըստ ներպետական օրենսդրության</i>	11
6.2. <i>իրավախախտման բնույթը</i>	12
6.3. <i>Պատժատեսակի խստությունը</i>	14
7. Նշված սկզբունքների կիրառումը Գուրեպկայի գործում	15

Նախաբան

Սույն վերլուծությունն իրականացվել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից 2005 թվականի սեպտեմբերի 6-ին Գուրեպկան ընդդեմ Ուկրաինայի գործով կայացրած վճռի հիման վրա: Գործը վերաբերում է դատարանին վիրավորելու հիմքով անձին վարչական կալանքի ենթարկելուն: Դիմումատուն պնդում էր, որ 7-օրյա վարչական կալանքը իր բնույթով և որպես պատժատեսակ իր խստության աստիճանով հավասարագոր էր քրեական մեղադրանքի ըստ Կոնվենցիայի մեկնաբանության: Պատասխանող կառավարությունը պնդում էր, որ Դիմումատուի գանգատը 6-րդ հոդվածի հիմքով պետք է անընդունելի համարվի, քանի որ նշված հոդվածը չի տարածվում վարչական գործերի վրա: 6-րդ հոդվածը տարածվում էր այն գործերի վրա, որտեղ անձին առաջադրվել է քրեական մեղադրանք, մինչդեռ տվյալ գործով առաջադրվել էր վարչական պատասխանատվություն: Վճռի համար վճռորոշ դեր ունեցավ Դատարանի կողմից Կոնվենցիայի իմաստով «քրեական մեղադրանք» հասկացության մեկնաբանության սահմանումը, որին էլ հիմնականում վերաբերում է այս վերլուծությունը:

Սույն վերլուծությունը նպատակ ունի բազմակողմանիորեն ուսումնասիրել գործի փաստերը, ներառյալ Դիմումատուի գանգատի և Թուրքական կառավարության առարկությունները: Վերլուծությունը նաև կանդրադառնա Եվրոպական դատարանի մոտեցումներին՝ վիճարկվող իրավունքների և ազատությունների մեկնաբանման հարցում:

Այս վերլուծությունը ունի ուսուցողական բնույթ և նպատակ ունի իրավաբանի մասնագիտություն ունեցողներին, այդ թվում դատավորներին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում ներգրավված անձանց և իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն չափանիշներին և ստանդարտներին որոնցով առաջնորդվում է Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները մեկնաբանելիս:

**Գուրեպկան ընդդեմ Ուկրաինայի
6 սեպտեմբերի 2005թ.
(Գանգատ թիվ 61406/00)**

1. Ներածություն

Գուրեպկայի գործով վճռում Դատարանը մեկ անգամ ևս անդրադարձավ «քրեական մեղադրանք» հասկացության մեկնաբանությանը, սակայն այս անգամ վարչական վարույթի համատեքստում: Այս իմաստով վճիռը հետաքրքրություն է ներկայացնում, եթե այն դիտենք Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) 2003 և 2004 թվականներին վարչական կալանքի տարածված պրակտիկայի համատեքստում:

Վճիռը նաև հետաքրքիր է նրանով, որ Դատարանը գանգատի քննությունը իրականացրեց Կոնվենցիայի 29(3) հոդվածով և Դատարանի Կանոնակարգի 54A1 կանոնով նախատեսված ընթացակարգով, որոնց համաձայն գանգատի ընդունելիության և ըստ էության քննության վարույթները միացվեցին: Կանոնակարգի նշված կետը ընդունվել է 2002 թվականին և սկսվել է կիրառվել 2004 թվականին: Հարկ է նշել, որ ՀՀ-ից ներկայացված գանգատների մեծ մասի քննությունը կատարվում է այս ընթացակարգով, որը թույլ է տալիս գործի քննության ժամկետները նշանակալից կարճեցնել:

Ուսումնասիրության մեջ հղումներ կատարվեն Եվրոպական դատարանի այն վճիռների վրա, որոնցում առաջին անգամ սահմանվեցին «քրեական մեղադրանք» հասկացության մեկնաբանության չափանիշները:

2. Եվրոպական Դատարանի վճիռները «քրեական մեղադրանք» հասկացության վերաբերյալ

Եվրոպական դատարանն ընդունել է մի քանի տասնյակ վճիռներ մեկնաբանելով «քրեական մեղադրանք» հասկացությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում: Դրանցից կարևորագույններն են այն վճիռները, որոնցում Դատարանը «քրեական մեղադրանք» հասկացությունը մեկնաբանել է ինքնուրույն՝ առանց հիմք ընդունելու, թե տվյալ գործերում անձին առաջադրված մեղադրանքը ներպետական օրենսդրությամբ որակվում էր որպես վարչական կամ կարգապահական:

Բառը կամ արտահայտությունը ինքնուրույն մեկնաբանելու ինստիտուտը Եվրոպական դատարանի կողմից լայն կիրառում ունի: Օրինակ, Եվրոպական դատարանի համար ինքնուրույն հասկացություններ են «քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ» հասկացությունը ըստ 6-րդ հոդվածի կամ «գույք» հասկացությունը ըստ Առաջին արձանագրության առաջին հոդվածի: Այս իմաստով նշված հասկացություններն իրենց իմաստով տարբերվում են Կոնվենցիայի անդամ երկրների ներպետական իրավունքում սահմանված իմաստից:

Ստորև նշված են մի շարք վճիռներ, որոնցում Եվրոպական Դատարանը մեկնաբանել է «քրեական մեղադրանք» հասկացությունը քրեական, քաղաքացիական, վարչական կամ կարգապահական գործերով.

Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների (1976)
 Engel and others v. Netherlands (1976) 1 EHRR 706

Օզթյուրքն ընդդեմ Գերմանիայի (1984)
 Ozturk v. Germany (1984)

Էզկուրբեթն ընդդեմ Բելգիայի
 Escoubet v. Belgium

Էզեհն ու Կոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորությանը
 Ezeh and Connors v. United Kingdom

Լուտցն ընդդեմ Գերմանիայի (1987)
 Lutz v. Germany (1987)

Վեբերն ընդդեմ Շվեյցարիայի (1990)
 Weber v. Switzerland (1990)

Դեմիկոլին ընդդեմ Մալթայի
 Demicoli v. Malta

Ռավնսբորգն ընդդեմ Շվեդիայի
 Ravensborg v. Sweden

Դեվիհիրն ընդդեմ Բելգիայի (1980)
 Deweer v. Belgium (1980)

Վերջին շրջանում Եվրոպական Դատարանը սկսել է քննել և որոշումներ կայացնել ԱՊՀ երկրներից բերված գանգատների վերաբերյալ, որոնցում առակա են նաև վարչական կալանքների վերաբերյալ գործեր: Սա կարևոր է այն առումով, որ վարչական կալանքը բավականին տարածված պրակտիկա է հենց նախկին Խորհրդային միության երկրներում, որը տոտալիտար համակարգի ժառանգություն է, և Եվրոպական Դատարանի որոշումները թույլ կտան վերջ տալու այդ պրակտիկային:

3. Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհժողովի (ԵԽՎ) Բանաձևերը ՀՀ-ում վարչական կալանքի պրակտիկայի վերաբերյալ

ԵԽՎ թիվ 1304 Բանաձևում (ընդունված 26 սեպտեմբեր 2002թ.) ԵՆ մարմիններն առաջին անգամ զգուշացրեցին ՀՀ իշխանություններին վարչական կալանքի կիրառման անթույլատրելիության մասին: Թեև ԵԽՎ բանաձևերը իրավաբանորեն պարտադիր նշանակություն չունեն, սակայն դրանք պարտադիր նշանակություն ունեն որպես քաղաքական փաստաթուղթ: Բանաձևի 9-րդ կետում նշվում է.

9. Վեհժողովը այնուհետև առաջարկում է իշխանություններին անհապաղ վերանայել Վարչական օրենսգիրքը: Վեհժողովը պահանջում է վերացնել վարչական կալանքների վերաբերյալ դրույթները և մինչ դա կատարելը ձեռնպահ մնալ դրանց կիրառումից: Վեհժողովը զգուշացնում է իշխանություններին այդ դրույթները չարաշահելու հետևանքների մասին, որոնք ամենևին չեն համապատասխանում Կազմակերպության սկզբունքներին:

Հետագայում, երբ 2003-2004թթ. վարչական կալանքները սկսվեցին ավելի մասսայաբար կիրառվել, ԵԽՎ-ն ընդունեց երկու նոր բանաձևեր՝ արտահայտելով իր խորին մտահոգությունը և նշված պրակտիկայի

անհամատեղելիությունը Կոնվենցիայի դրույթներին: Մասնավորապես, թիվ 1361 Բանաձևի 14-րդ կետում (ընդունված 27 հունվար 2004թ.), Վեհաժողովը նշում է.

14. Վեհաժողովը *ցնցված է Վարչական օրենսգրքով նախատեսված վարչական կալանքի՝ կամայական ընթացակարգով կիրառելու սկանդալային չափերով, որն ամբողջովին անհամատեղելի է 2002թ. սեպտեմբերի 1304 Բանաձևի՝ խիստ ոճով կազմված տեքստի հետ, որում նշվում էր, որ Հայաստանի իշխանությունները չպետք է այլևս կիրառեն այդ ընթացակարգերը: Վեհաժողովն ամենայն խստությամբ դատապարտում է ավելի քան 270 մարդու ձերբակալումը և դատապարտումը, որոնք համարվում են ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ, դրանց համախոհներ և գրասենյակի աշխատակիցներ, որտեղ դեպքերը տեղի են ունեցել Նախագահական ընտրությունների առաջին և երկրորդ փուլերի միջև ընկած ժամանակահատվածում և երկրորդ փուլի վերջում: Վեհաժողովը ակնկալում է, որ մինչև 2004 թվականի փետրվար ամիսը ՀՀ իշխանությունները կքննարկեն Վարչական օրենսգրքով տրված վարչական կալանքի հարցը Եվրոպայի խորհրդի մասնագետների հետ և մինչև 2004 թվականի ապրիլ ամիսը կուղարկեն օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը ԵՄ փորձաքննությանը:*

2004թ. Ապրիլի 28-ին ընդունված թիվ 1374 Բանաձևում ԵԽՄԿ-ն արդեն հանդես եկավ վերջնագրի տեսք ունեցող հայտարարությամբ՝ ՀՀ իշխանություններին առաջադրելով յոթ կետից բաղկացած պահանջներ: Նշված պահանջները մինչև 2004 թվականի սեպտեմբերի աշնանային նստաշրջանը չբավարարելու դեպքում, ԵԽ-ն սպառնում էր Հայաստանին գրկել ԵՄ անդամակցությունից (տե՛ս Բանաձևի 11-րդ կետը): Նշված պահանջների շարքում չորրորդ կետը վերաբերվում էր վարչական կալանքներին.

«ԵԽՄԿ-ն կոչ է անում ՀՀ իշխանություններին

iv. անմիջապես ազատ արձակել անձանց, որոնք կալանվել են հանրահավաքներին մասնակցելու համար և անմիջապես վերջ տալ վարչական կալանքի պրակտիկային և այս առումով փոփոխության ենթարկել Վարչական օրենսգիրքը»

Հատկանշական է այն, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի Հանրաքվեով ընդունված նոր Սահմանադրությունը (հոդված 16) վերջ դրեց վարչական կալանքի պրակտիկային Հայաստանում: Սակայն հաշվի առնելով, որ Եվրոպական դատարանը ներկայումս քննում է մոտ երկու տասնյակ գործեր վարչական կալանքների վերաբերյալ (վերը նշված արագացված ընթացակարգով), գտնում ենք, որ այս հոդվածում արժարժվող թեման դեռ չի կորցրել իր հետաքրքրությունը:

4. «Քրեական մեղադրանք» հասկացության ինքնուրույն մեկնաբանելու պատճառները

ա. Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառվում է միայն այնպիսի գործերի վրա, որտեղ անձին առաջադրվել է «քրեական մեղադրանք» կամ խախտվել են նրա «քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները»: Նշանակում է, որ

հողվածը չի տարածվում վարչական կամ կարգապահական վարույթների վրա: Սա բավականին նեղացնում է հողվածի կիրառելիության շրջանակները: Ճիշտ է, Եվրոպայի Խորհուրդն կողմ է անդամ երկրներում ապաքրեականացման գործընթացին, սակայն մյուս կողմից մտահոգված է, որ եթե անդամ երկրներին թույլատրվի վարչական կամ կարգապահական բնույթի ցանկացած իրավախախտում հանել 6-րդ հողվածի պաշտպանության շրջանակներից՝ Կոնվենցիայի 6-րդ հողվածի կիրառելիության ոլորտը «ենթարկելով անդամ երկրների սուվերեն կամքին», ապա դրանով լրջորեն կվտանգի Կոնվենցիայի արդյունավետությունը.

Կոնվենցիան դեմ չէ ապաքրեականացման գործընթացին, որն ընթանում է Կոնվենցիայի անդամ շատ երկրներում: Այնուամենայնիվ, եթե Բարձր Պայմանավորվող Կողմերը իրենց հայեցողությամբ իրավախախտումը քրեականի փոխարեն բնորոշում են վարչական, որպեսզի դրանով բացառեն 6-րդ և 7-րդ հողվածներով տրված հիմնարար սկզբունքների գործողությունը, ապա այդ հողվածների կիրառելիության հարցը ենթարկվում է նրանց սուվերեն կամքին: Նման ինքնուրույնության չափից ավելի դրսևորումը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք կարող են հակասել Կոնվենցիայի հիմնական խնդիրներին և նպատակներին (Օգթյուրքն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, 1984թ, կետ 49):

Նույն միտքը նշվում է նաև Էնգելի գործով վճռում՝ քրեական և կարգապահական վարույթների համատեքստում:

Եթե Պայմանավորվող պետությունները կարողանային իրենց հայեցողությամբ իրավախախտումը որակել որպես կարգապահական՝ քրեականի փոխարեն, կամ «խառը» իրավախախտում կատարողին հետապնդել կարգապահական, այլ ոչ թե քրեական մակարդակով, ապա 6-րդ և 7-րդ հողվածների հիմնական դրույթների գործածությունը կենթարկվեր նրանց ինքնիշխան կամքին: Իրավասության այդպիսի ընդլայնումը կարող էր հանգեցնել Կոնվենցիայի նպատակների և խնդիրների հետ անհամատեղելի արդյունքների (Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործով վճիռը, կետ 81):

Լուսոցի¹ և Օգթյուրքի² գործերում դիմումատուները ենթարկվել էին վարչական պատասխանատվության ճանապարհային երթևեկության կանոնների պահանջների խախտման համար: Պատասխանող պետության կարծիքով, Կոնվենցիայի 6-րդ հողվածը կիրառման ենթակա չէր, որովհետև դիմողին «քրեական մեղադրանք ներկայացված» չի եղել: Ըստ Գերմանիայի կառավարության նկատառումների.

«... 1968-1978 թվականներին օրենքով մի շարք, ներառյալ՝ ճանապարհատրանսպորտային ոլորտի իրավախախտումներ ապաքրեականացվեցին, և պարոն Լուսոցը մեղադրվեց միայն «վարչական իրավախախտում կատարած լինելու մեջ: Կառավարության պնդմամբ, նման իրավախախտումը քրեականից տարբերվում էր ինչպես իր իրավական

¹ Լուսոցն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (1987թ.)

² Օգթյուրքն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (1984 թ.)

հետևանքներով ու բնույթով, այնպես էլ քննության ընթացակարգով» (Լուսոցի գործով վճիռը, կետ 50)»:

Ուստի, կառավարությունը պնդում էր անընդունելի համարել դիմումատուի պնդումները 6-րդ հոդվածի վերաբերյալ, քանի որ նշված հոդվածը տարածվում էր միայն քրեական և քաղաքացիական բնույթի իրավախախտումների վրա.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները...կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք...»³:

Մինչդեռ դիմումատուին առաջադրվել էր վարչական բնույթի մեղադրանք: Ըստ Դատարանի՝ *«համապատասխանաբար, հարց է ծագում, թե արդյոք այդ տարբերությունը վճռական նշանակություն ունի Կոնվենցիայի նպատակների համար» (կետ 51):*

բ. Դատարանի մտահոգությունը նաև հիմնված էր այն հանգամանքի վրա, որ շատ երկրներում քրեական և վարչական (կամ կարգապահական) վարույթների միջև չկար հստակ տարանջատում և հաճախ դրանք զուտ ձևական բնույթ էին կրում.

«...գործողությունը կամ անգործությունը...ներպետական օրենսդրությամբ դիտարկվում է որպես խառը հանցագործություն, այսինքն՝ և՛ քրեական, և՛ կարգապահական, և այս դեպքում գոյություն ունի քրեական և կարգապահական վարույթների միջև ընտրություն կատարելու կամ նույնիսկ դրանց միավորման հնարավորություն» (Էնգելի գործով վճիռ, կետ 80):

Նման իրավիճակ առկա էր հատկապես Գերմանիայի ներպետական իրավունքում: Ուսումնասիրելով ներպետական դատավարական նորմերն ու պրակտիկան, Դատարանը գտավ, որ քրեական և վարչական վարույթների միջև բացակայում էր հստակ տարանջատումը:

Ի մի բերելով վերը նշվածը, կարելի է նշել, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը ինքնուրույն մեկնաբանելու հիմք է տալիս Դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի. առաջին, Կոնվենցիայի դրույթները պետք է մեկնաբանել արդյունավետ կերպով՝ որպեսզի դրանով չսահմանափակվի անձի իրավունքները: Երկրորդ, քրեական մեղադրանք հասկացության մեկնաբանությունը չպետք է թողնել անդամ պետությունների հայեցողությանը, քանի որ շատ հաճախ վարչական (կամ կարգապահական) իրավախախտման հիմքով մեղադրանքը իրականում հավասարազոր է քրեական մեղադրանքի՝ հատկապես, երբ ներպետական իրավունքը հստակորեն չի տարանջատում նշված վարույթները:

Հաշվի առնելով վերը նշվածը, Եվրոպական դատարանը նախընտրել է «քրեական մեղադրանք» հասկացությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում զարգացնել ինքնուրույն մեկնաբանությամբ՝ անկախ ազգային օրենսդրությամբ և դատական պրակտիկայով դրա բնորոշումից:

³ ՄԻԵԿ, հոդված 6(1)

5. «Մեղադրանք» հասկացության մեկնաբանությունը

«Մեղադրանքը» անկախ հասկացություն է Եվրոպական դատարանի համար, որը տվյալ գործում կիրառվում է անկախ նրանից, թե ինչպես է տվյալ գործի շրջանակներում «մեղադրանք» հասկացությունը մեկնաբանվում ներպետական իրավական ակտերով:

Դեվիիրն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճռում, Դատարանը նշել է, որ «մեղադրանք» բառին պետք է տրվի էական և ոչ թե ձևական նշանակություն և նշել է, որ ստիպված է հեռանալ այդ բառի սովորական իմաստից և ուսումնասիրել, թե ինչ են իրականում իրենցից ներկայացնում այդ բառի հետևում թաքնված ընթացակարգերը: Այս գործում Դատարանը սահմանեց, որ «մեղադրանք» է համարվում ա) անձին իրավասու մարմինների կողմից պաշտոնապես ծանուցելը այն մասին, որ անձը գործել է հանցանք և բ) մի իրավիճակ, որը նկատելի ազդեցություն է թողել կասկածյալի վրա (նրա նկատմամբ իշխանությունների գործողություններից (Դեվիիրն ընդդեմ Բելգիայի 27 փետրվարի 1980, Շարք Ա, համար 35, էջ թթ, կետեր 42, 44, 46):

Ստորև ներկայացվում են մի շարք այլ իրավիճակներ, որոնք ըստ Եվրոպական դատարանի հանգեցնում են մեղադրանքի առաջադրմանը.

- 1) Անձի կալանավորման մասին որոշում ընդունելը հանցանք գործելու հիմքով (*Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի գործով 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, էջ 25*),
- 2) Քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ անձին պաշտոնապես հայտնելը (*Նեմիստերն ընդդեմ Ավստրիայի գործով 1968 թվականի հունիսի 27-ի վճիռը, էջ 3*),
- 3) Երբ իշխանությունները քննություն կատարելիս պահանջում են անձին ներկայացնել ապացույցներ կամ սառեցնել նրա բանկի հաշիվը (*Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի գործով 1993 թ. փետրվարի 25-ի վճիռը, 256-Ա*),
- 4) Երբ անձը դիմում է պաշտպանի ծառայությանը այն բանից հետո, երբ պարզվում է, որ դատախազությունը անձի դեմ գործ է հարուցել ոստիկանության զեկույցի հիման վրա (*Անգելուչին ընդդեմ Իտալիայի, համ. 12666/87, 19 փետրվարի 1991թ.*),
- 5) Երբ դատախազությունը հրամայում է ժանանակավորապես փակել անձին պատկանող խանութը քաղաքացիների գանգատների հիման վրա այն մասին, որ անձը խախտել է գնային որոշ նորմեր (*տե՛ս Դեվիիրի գործով վճիռը*):

6. «Քրեական» հասկացության մեկնաբանությունը

Ինչպես նշվեց վերևում, մեղադրանքը պետք է լինի քրեական, որեսզի դիտարկվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պաշտպանության ներքո: Պարզելու համար, թե արդյոք իրավախախտումը Կոնվենցիայի իմաստով համարվում է քրեական, *Էնգելն և այլոք ընդդեմ Նիդերլանդների* գործով վճռում Դատարանը սահմանեց երեք չափանիշներ, որոնք են.

- ա. իրավախախտման դասակարգումը ներպետական օրենսդրությամբ,
- բ. իրավախախտման բնույթը,
- գ. Պատժատեսակի խստության աստիճանը:

Նշվածը հաստատվում է նաև Օգթյուրքի գործով վճռով.

«...Այսպիսով, վերահաստատելով, որ «քրեական» հասկացությունը «ինքնավար» իմաստ է ձեռք բերում 6-հոդվածի ներքո, Ղատարանը այնուհետև պետք է պարզի, թե արդյոք ...«իրավախախտումը», որը կատարվել է դիմումատուի կողմից, «քրեական» բնույթի այդ հոդվածի իմաստի ներքո: Այդ նպատակով, Ղատարանը կհիմնվի վերը նշված էնգելն ու այլոք դատավճռով սահմանված չափանիշի վրա...առաջին հարցը, որը պետք է պարզել, այն է, թե արդյոք քննարկվող իրավախախտումը սահմանող տեքստը, ըստ պատասխանող երկրի իրավական համակարգի, պատկանում է քրեական իրավունքին. այնուհետև պետք է որոշել իրավախախտման բնույթը և, ի վերջո, պատժի բնույթն ու խստության աստիճանը, որը կրելու վտանգին ենթարկված է շահագրգիռ անձը, և այդ ամենը՝ հաշվի առնելով 6-րդ հոդվածի նպատակն և խնդիրները, 6-րդ հոդվածում օգտագործված տերմիններն իրենց սովորական իմաստով և Պայմանավորվող երկրների օրենքները»: (կետ 50)

Նշված երեք չափանիշները հանդես են գալիս ոչ թե միասին, այլ միմյանցից առանձին: Այսինքն, բավական է ցույց տալ, որ երեքից առնվազն մեկը կիրառելի է տվյալ գործի փաստերի առնչությամբ, որպեսզի ապացուցվի, որ անձի նկատմամբ վարչական կամ կարգապահական բնույթի մեղադրանքը Կոնվենցիայի իմաստով իրականում համարվում է քրեական բնույթի:

6.1 Իրավախախտման դասակարգումը ըստ ներպետական օրենսդրության

Եթե իրավախախտումը ըստ ներպետական օրենսդրության քրեական բնույթի է, ապա 6-րդ հոդվածը ինքնին կիրառելի է: Եթե իրավախախտումը վարչական կամ կարգապահական բնույթի է, ապա Ղատարանն կիրառում է արդեն հիշատակված ստորև նշված երկու չափանիշները՝ պարզելու դրանց իրական բնույթն ըստ Կոնվենցիայի իմաստի: Նախ, Ղատարանն ուսումնասիրում է, թե արդյոք ներպետական օրենսդրությունը հստակ տարանջատում է անցկացնում քրեական և վարչական վարույթների միջև, թե դրանք զուտ ձևական բնույթ են կրում.

«Այս կապակցությամբ անհրաժեշտ է գիտենալ, թե արդյոք պատասխանող պետության ներպետական իրավունքում համապատասխան հոդվածները պատկանում են քրեական, թե՛ վարչական իրավունքին, թե՛ երկուսին միաժամանակ: Դա, սակայն, ոչ ավելին, քան ելակետ է: Այդ կերպ ստացված տվյալներն ունեն միայն ձևական և հարաբերական արժեք և պետք է ուսումնասիրվեն տարբեր մասնակից պետությունների օրենսդրություններից բխող ընդհանուր հայտարարից ելնելով» (Օգթյուրք գործով վճիռը, կետ 82):

Օգթյուրքի գործում վիճարկվող իրավախախտումը վարչական բնույթի էր: Իրավախախտումը կայանում էր նրանում, որ անձը իր մեքենայով բախվել էր մեկ

այլ մեքենայի, որի արդյունքում ենթարկվել էր վարչական տուգանքի: Մինչ այդ Չերմանիան ապաքրեականացրել էր ճանապարհատրանսպորտային իրավախախտումները: Կառավարության պնդմամբ.

«նման իրավախախտումը քրեականից տարբերվում էր ինչպես իր իրավական հետևանքներով ու բնույթով, այնպես էլ քննության ընթացակարգով», որը խիստ պարզեցված էր:⁴

Սակայն Ղատարանի խնդիրն էր պարզել, արդյոք այն փաստը, որ Չերմանական օրենսդրությամբ նշված իրավախախտումը ոչ թե քրեական հանցագործություն է, այլ վարչական, վճռական նշանակություն ունի Կոնվենցիայի նպատակների համար, և արդյոք դրա դասակարգումը որպես վարչական համընկնում է Կոնվենցիայի նպատակների հետ: Այդ նպատակով Ղատարանը բազմակողմանիորեն ուսումնասիրեց Չերմանիայի ճանապարհատրանսպորտային իրավախախտումների վերաբերյալ վարչական և քրեական իրավական կարգավորումները:

Պարզվում է, որ իրավախախտման առիթով հարուցված վարույթների իրականացման դատավարական նորմերը (այդ թվում նաև բողոքարկման ընթացակարգը) կառուցված է այնպես, որ ցանկացած պահի վարչական վարույթը կարող է փոխարինվել քրեական վարույթով: Օրինակ, եթե անձը հրաժարվում է վճարել վարչական տուգանք և բողոքարկում է վարչական դատարանի որոշումը վերադաս դատարանին, ապա վերաքննիչ դատարանի հայեցողությամբ անձի նկատմամբ կիրառված վարչական տույժը կարող է փոխարինվել քրեական մեղադրանքով: Կամ, վարչական մարմինները կարող են գործն ուղարկել դատախազին, եթե իրենց հայեցողությամբ համարում են, որ քրեորեն պատժելի արարքի մեջ հանցակազմ չկա: Ղատախազի որոշումը վարչական բնույթի իրավախախտումը քրեականի փոխելու վերաբերյալ պարտադիր ուժ ունի: Նման օրինակներ, երբ ընթացակարգը հեշտությամբ թույլատրում է վարչական բնույթի վարույթից «ցատկել» քրեականի, կարելի է շատ բերել: Այսինքն, վարչական նորմերին զուգահեռ ներպետական օրենսդրությունը թույլատրում էր կիրառել նաև քրեական նորմեր: Այս հանգամանքը չէր վիճարկում նաև պատասպանող պետությունը:

Ղատարանը եկավ այն համոզման, որ «չկար բացարձակ սահմանազատում Չերմանիայի քրեական և վարչական իրավունքների միջև»: Նման սահմանազատումը սոսկ հարաբերական էր: Հետևաբար, չի կարելի ասել, որ կառավարության ներկայացրած փաստարկը, ըստ որի տվյալ իրավախախտումը վարչական է ըստ ներպետական օրենսդրության, համընկնում է Կոնվենցիայ սկզբունքներին:

6.2. Իրավախախտման բնույթը

Իրավախախտման բնույթն ուսումնասիրելիս Ղատարանը հաշվի է առնում երկու հանգամանք.

- ա) խախտված իրավական նորմի կիրառման ոլորտը,
- բ) պատժի նպատակը:

⁴ Տես նաև Լուսոնգի գործով դատավճիռը, կետ 50

Եթե իրավական նորմի կիրառումն ուղղված է որոշակի կարգավիճակ ունեցող անձանց խմբի դեմ, և չունի համընդհանուր բնույթ, ապա խոսքը գնում է կարգապահական, և ոչ թե քրեական բնույթի իրավախախտման մասին: Էնգելի գործում իրավախախտումը կատարել էին զինվորները, որոնք ենթարկվել էին կարգապահական պատասխանատվության: Իսկ եթե նորմը համընդհանուր կիրառում ունի, ապա Դատարանը հակված է սահմանելու, որ.

«... տվյալ դեպքում խոսքը գնում է քրեական իրավունքի տակ ընկնող նորմի մասին: Սա նշանակում է, որ տվյալ դեպքում 6-րդ հոդվածը կիրառելի է»⁵:

Օգթյուրքի գործում Դատարանը հաշվի առավ այն հանգամանքը, որ իրավական նորմի կիրառումն ուներ համընդհանուր բնույթ, և որ վիճարկվող նորմը«

«...ուղղված էր ոչ թե որոշակի կարգավիճակ ունեցող մարդկանց խմբի դեմ, ինչպես օրինակ կարգապահական իրավունքի նորմերում, այլ ճանապարհատրանսպորտային միջոցները օգտագործող բոլոր անձանց դեմ»⁶:

Երկրորդ հարցը վերաբերում է, նրան թե ինչ նպատակով է կիրառվում նորմը: Քրեական մեղադրանք առաջադրելիս անձի նկատմամբ կիրառվում են ազատագրկում սահմանող կամ ուղղիչ նպատակով պատժատեսակներ: Նման պատժատեսակները լինում են սովորաբար տուգանքի կամ ազատագրկման տեսքով: *Օգթյուրքի* գործում կառավարությունը չհերքեց այն փաստը, որ կիրառվող նորմերը իսկապես իրենց բնույթով **հարկադրող և սահմանափակող են**.

«...քիչ նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք իրավական նորմերը, որոնք վիճարկում է Օգթյուրքը, կոչված են պաշտպանելու այլոց իրավունքները և շահերը, կամ արդյոք դրանց նպատակն է ճանապարհատրանսպորտային երթևեկության անվտանգության պահանջներին համապատասխանեցնելը»⁷:

Այսինքն, թեև Գերմանիան ճանապարհատրանսպորտային իրավախախտումները ապաքրեականացրել էր, սակայն.

«...դիմումատուի կողմից վիճարկվող իրավական նորմը իրականում իր բնույթով որևէ փոփոխություն չէր կրել...այդ նորմը ուղղված էր ոչ թե առանձին կարգավիճակ ունեցող մարդկանց խմբի դեմ, ինչպես օրինակ կարգապահական իրավախախտումների դեպքում, այլ բոլոր քաղաքացիների դեմ, ովքոր օգտվում էին ճանապարհատրանսպորտային միջոցներից: Ավելին, տվյալ իրավական նորմը խախտելու դեպքում անձը ենթարկվում էր պատիժ սահմանող տույժի»⁸:

⁵ Πίσα Ιίοε, Έαδαδεία Όαδαε, Έ.Α. Άεάεηάάά. Ίδαάί ία ηιδαάάάεεάίηά ηόαάάίηά δαζάεδαδάεεηδάί. Νδδ.20

⁶ Տե՛ս. Օգթյուրքի գործով վճիռը, կետ 53

⁷ Տե՛ս նույն տեղը

⁸ Տե՛ս նույն տեղը

Օգթյուրքի գործում ի մի բերելով վերը նշվածը, մասնավորապես հստակ տարանջատման բացակայությունը քրեական և վարչական վարույթների միջև, ինչպես նաև նորմի կիրառման պատժող և սահմանափակող բնույթը, Դատարանը որոշեց, որ վիճարկվող նորմն իր բնույթով, Կոնվենցիայի իմաստով, քրեական էր:

6.3. Պատժատեսակի խստությունը

Այս չափանիշին ավելի մանրամասն Դատարանը անդրադարձել էր *Էնգելի* գործով վճռում: Փաստերը վերաբերվում էին Հոլանդիայի բանակի մի խումբ զինծառայողներին տարբեր խստության կարգապահական տույժի ենթարկելուն: Պատասխանող կողմը պնդում էր, որ 6-րդ հոդվածը չի տարածվում գործի փաստերի վրա, որովհետև զինվորները ենթարկվել էին կարգապահական պատասխանատվության: Դիմումատուն պնդում էր, որ պատժատեսակի խստությունը, կալանքը և կալանքի պայմանները հավասարազոր էին քրեական մեղադրանքի ենթարկված լինելուն: Ըստ Դատարանի.

«Կոնվենցիայի 6-րդ հոդվածի բավարար չափով կիրառման համար պահանջվում է, որպեսզի իրավախախտումն իր բնույթով լինի Կոնվենցիայի իմաստով քրեական, կամ շահագրգիռ անձին ենթարկի այնպիսի պատիժ կրելու վտանգի, որն իր բնույթով և ծանրության աստիճանով կարող է հավասարեցվել քրեականի»:⁹

Դատարանը սահմանեց, որ որոշելու համար, թե արդյոք պատժի տեսակը «իր բնույթով և ծանրության աստիճանով կարող է հավասարվել քրեական թե ոչ», անհրաժեշտ է ուշադրություն դարձնել. 1) թե արդյոք նորմը նախատեսում է ազատազրկում, և 2) կալանքի պայմաններին.

«... Հասարակությունում, ուր գործում է իրավունքի գերակայությունը, ազատազրկման ձևով պատիժները պատկանում են «քրեական ոլորտին», բացառությամբ այն պատիժների, որոնք իրենց բնույթով, տևողությամբ կամ իրականացման ձևով չեն կարող համարվել զգալի վնաս հասցնող պատիժներ: Այն ամենի լրջությունը, ինչը քննարկման առարկա է հանդիսանում, այն է՝ պետության սովորույթները և անձի ֆիզիկական ազատության հարգմանը Կոնվենցիայի կողմից տրվող նշանակությանը, այս ամենը պահանջում է, որպեսզի հենց այդպես էլ լինի...»:¹⁰

Ընդհանուր առմամբ մեղադրանք էր առաջադրվել հինգ հոգու, որոնցից առաջինը ենթարկվել էր չորս օրվա «թեթև կալանքի», երկրորդը՝ երկու օրվա «խիստ կալանքի», իսկ մյուս երեքը ենթարկվել էին երեքից չորս ամսվա կարգապահական տույժի՝ հատուկ կարգապահական գումարտակում: Վերջինը Հոլանդիայի զինվորական օրենսգրքով նախատեսված ամենածանր կարգապահական տույժն էր: Առաջին զինվորի երկու օր ժամկետով «թեթև կալանքը», ըստ Դատարանի, շատ կարճ ժամկետ էր նախատեսում քրեական բնույթի համարվելու համար: Բացի դրանից, Դատարանը նաև հաշվի առավ այն

⁹ Տես Լուտցի գործով դատավճիռը, կետ 55

¹⁰ Տես Էնգելի գործով դատավճիռը, կետ 82

հանգամանքը, ինչպես նշվեց վերևում, թե արդյոք «խախտումն իր բնույթով...անձին ենթարկում է պատիժ կրելու վտանգի»: Առաջին զինվորի նկատմամբ այդպիսի վտանգ չկար, քանի որ մինչև դատաքննությունը նա արդեն ենթարկվել էր երկու օրվա կալանքի: Ինչ վերաբերվում է մյուս երեք զինվորներին, ապա նրանց առաջադրված մեղադրանքները Դատարանի համոզմամբ ընկնում են քրեական ոլորտի տակ, քանի որ վերջիններիս նկատմամբ կիրառվել էր ամենախիստ կարգապահական տույժը: Ըստ Եվրոպական դատարանի կայացրած վճռի 64-րդ կետի.

«... նման կարգապահական տուժի ենթարկված շարքայիները չէին առանձնացվում նրանցից, ովքեր դատապարտվել էին քրեական հողվածով, և մեկ կամ ավելի ժամկետով իրավունք չունեին բացակայել պատժատեղից: Նրանց նկատմամբ սահմանված տուժը տևեց երեքից վեց ամիս»:

Թեև վերջին երեք զինվորներից մեկի նկատմամբ պատժաչափը բողոքարկման հիման վրա կրճատվեց մինչև տասներկու օր, սակայն Դատարանը դա էական չհամարեց, քանի որ առավել կարևոր էր, թե սկզբունքորեն ինչ վտանգի առջև էին կանգնած մեղադրվողները:

7. Նշված սկզբունքների կիրառումը Գործակալի գործում

Ըստ *Գուրեպկայի* գործի փաստերի, դիմումատուն ենթարկվել էր 7-օրյա վարչական կալանքի «դատարանին վիրավորելու» հիմքով: Դիմումատուն վիճարկում էր Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որը Դատարանն անընդունելի համարեց այն հիմքով, որ նշված հոդվածը չի երաշխավորում բողոքարկելու հնարավորություն կամ գործը երկրորդ աստիճանում լսելու հնարավորություն: Սակայն, Դատարանը իր նախաձեռնությամբ որոշեց, որ եթե դիմումատուն կարողանա համոզիչ ցույց տալ, որ վիճարկելի մեղադրանքն իր էությամբ քրեական է, ապա կկիրառի 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածը: Պատասխանող կառավարությունը պնդում էր *ratione materie* հիմքով զանգատն անընդունելի համարել, քանի որ հարուցված մեղադրանքը վարչական էր իր բնույթով և այդ իմաստով նշված հոդվածը, որը գործում է միայն, եթե անձին առաջդրել են քրեական մեղադրանք, չի տարածվում տվյալ գործի փաստերի վրա: Բացի այդ, պատասխանող կառավարությունը գտնում էր, որ 7-օրյա կալանքն իր խստության աստիճանով չէր կարող պատկանել «քրեական ոլորտին»: Ավելին, պետությունը գտնում էր, որ պատժաչափը որոշելիս ցուցաբերվել էր համաչափ մոտեցում, քանի որ օրենսդիրը սահմանում էր մինչև 15-օրյա կալանքի ժամկետ, մինչդեռ դիմումատուն ենթարկվել էր 7-օրյա ժամկետով կալանքի:

Եվրոպական դատարանը անընդունելի համարեց պետության փաստարկները: Հղում կատարելով իր նախադեպերին (*Էնգելի, Օզթյուրքի, Էզկյուրետի գործերով վճիռներին*), Դատարանը սահմանեց, որ տվյալ գործը իր բնույթով քրեական է, իսկ հարուցված վարչական վարույթը պարունակում է քրեական վարույթի տարրեր (կետ 55): Այս հիմքով Դատարանը զանգատն համարեց ընդունելի և անմիջապես ընդունեց վճիռ՝ համաձայն Կոնվենցիայի 29(3) հոդվածի:

Բնականաբար, կարելի է փորձել վերը նշված երեք չափանիշները կիրառել 10-15 օրյա վարչական կալանքների լայն պրակտիկայի վրա ՀՀ-ում 2003-2004 թվականների ընթացքում: Արդյոք վարչական իրավախախտման բնույթը, կամ կիրառված պատժաչափը իր «բնույթով և ծանրության աստիճանով», հավասարազոր չէր քրեական մեղադրանքի: Եթե այո, նշանակում է վարչական կալանքների վերաբերյալ գանգատները ընդունելի կհամարվեն Եվրոպական դատարանի կողմից: Սա հաստատվում է արդեն այն փաստով, որ նշված հիմքերով բավականին մեծ գործեր արդեն ծանուցվել են ՀՀ կառավարությանը:

Այս ուսումնասիրությունը գրելու պահին ԵԴ-ն արդեն կայացրել էր ընդդեմ Հայաստանի իր առաջին որոշումը գանգատի ընդունելիության մասին (Սկրտչյանն ընդդեմ Հայաստանի, դիմում թիվ. 6562/03): Գործի փաստերը վերաբերվում են վարչական տուգանքին: Ներկայումս ընդունելիության վարույթում են գտնվում նվազագույնը երկու տասնյակ գանգատներ, որոնք վերաբերվում են 5-ից 15 օր ժամկետով վարչական կալանքների կիրառմանը: Ընդ որում, բոլոր գործերում դիմումատուները վիճարկում են նաև վարչական կալանքի պայմանները: